

ԻՄՍՍՔՐՏԻՔ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՐԴԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

18-19 հոկտեմբեր, 2023 թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ



ՀՀ ԳԱԱ Հնագիտության և
ազգագրության ինստիտուտ

Գիտաժողովը կազմակերպվել է ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՉԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ
ԱՄՓՈՓԱԳՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային
արդի գործընթացները Հայաստանում.
հիմնախնդիրներ և հեռանկարներ

18-19-ը հոկտեմբերի, 2023

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԶԵՎՈՒՑՈՒՄՆԵՐԻ
ԱՍՓՈՓԱԳՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

INSTITUTE ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA

**Globalization and Contemporary Socio-Cultural Processes
in Armenia:
Problems and Perspectives**

October 18-19, 2023

CONFERENCE PROCEEDINGS

**IAE Publishing House
Yerevan 2023**

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА

**Глобализация и современные социально-культурные процессы
в Армении.
Проблемы и перспективы**

Октябрь 18-19, 2023, Ереван

**СБОРНИК АНОТАЦИЙ
НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ**

**Издательство ИАЭ
ЕРЕВАН 2023**

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ*

Գիտական խմբագիր՝ Մ. Վ. Գալստյան

ՀՏԴ 314/316:008(082)
ԳՄԴ 60+71g43
Հ 202

Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում: Գիտա-
ժողովի ամփոփագրեր (18-19-ը հոկտեմբերի, 2023 թ.) // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտ.-Եր.: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, 2023,
84 էջ:

Ամփոփագրերի ժողովածուում համակողմանիորեն քննարկվում են Հայաստանի առջև ծառայած արդի
սոցիալ-մշակութային մարտահրավերները, այդ թվում՝ արտագաղթի և բռնի տեղահանության, ընտա-
նիքի և ներընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող փոխակերպումների, լեզվական, կրոնա-
կան վարքագծի և ինքնության, մշակութային ժառանգության, սփյուռքի և հնարավոր հայրենադարձու-
թյան հետ կապված հիմնախնդիրներ:

Գիտաժողովն կազմակերպվել է ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսա-
կան աջակցությամբ:

ISBN 978-9939-886-44-2

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Միհրան Գալստյան, պ. գ. դ., դոցենտ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Էթնոսոցիոլոգիայի Բաժնի վարիչ
Էլ. հասցե՝ akoontk@yahoo.com

ՄԱՎ, ԹԵ՞ ԳՆԱԼ: ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՀՆԱՐԱՎՈՐ ՆՈՐ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

Հիմնարարներ՝ Էմիգրացիա, սոցիալ-մշակութային պատճառներ, սեռ, տարիք, կրթություն, բավարարվածություն:

Հայաստանից արտագաղթի խնդիրը՝ պատճառների և անվտանգային, տնտեսական, ժողովրդագրական ազդեցության տեսանկյունից, ակադեմիական գրականության մեջ լավ ուսումնասիրված թեմաներից է: Այդ հիմնախնդիրը, ինչպես Հայաստանի, այնպես էլ արևմտյան հետազոտողները հիմնականում քննարկում են ուղարկող և ընդունող երկրներում գոյություն ունեցող «պահպանող», «վանող» և «ձգող» տնտեսական գործոնների տեսության շրջանակներում: Այս զեկուցման մեջ կարևորում ենք արտագաղթ առաջացնող սոցիալ-մշակութային խնդրի քննարկումը: Ձեկուցումը հնարավորություն կտա փոխելու և վերանայելու մինչ այդ գոյություն ունեցող մոտեցումները, քանի որ նոր արտագաղթի բացահայտման և հետագա կանխատեսման նպատակով կարևոր տեղ կհատկացվի այդ երևույթն առաջացնող սոցիալ-մշակութային և հոգեբանական գործոնների քննարկմանը: Ձեկուցման մեջ հղում ենք անելու արևմտյան սոցիոլոգիայում միգրացիա ծնող մշակութային տեսություններին: Այդ առումով կարևորում ենք կուտակային պատճառականության խնդիրը, ըստ որի՝ միգրացիայի յուրաքանչյուր դեպք մեծացնում է հավանականությունը նոր միգրանտների ներգրավման և համայնքում միգրացիայի ավանդույթների ձևավորման, սոցիալական ցանցի տեսությունները: Այդ մոտեցումների շրջանակներում հետազոտության արդյունքների հիման վրա նոր հավանական արտագաղթի պատճառների տեսակարար կշռում կվերլուծվեն հարցման մասնակիցների՝ Հայաստանում ստեղծված իրավական, անվտանգային, ինքնաիրացման, կրթական, սոցիալական ինստիտուտներից բավարարվածության, ապագայի նկատմամբ ունեցած դիրքորոշումները: «Ներկայումս մտադիր եք մեկնել արտերկիր՝ բնակության նպատակով» հարցին Հայաստանից մեկնել ցանկացողների պատասխանները կհամադրվեն նրանց սեռի, տարիքի, կրթության, լեզվական իմացության, նյութական բավարարվածության, ընտանեկան կարգավիճակի, սոցիալական ցանցի և նախընտրելի երկրի, ընտանիքով կամ մենակ արտագաղթելու, մեկնելու հավանական ժամկետների, բնակավայրի տիպի (քաղաք, գյուղ) տվյալների հետ: Այդ վերլուծությունը հնարավորություն կտա որոշելու հնարավոր միգրանտներին և Հայաստանից հեռանալու ցանկություն ունեցող հավանական խմբերին:

Հոդվածը հիմնվում է 2021 թ. Հայաստանի բոլոր մարզերի 20 քաղաքային և 37 գյուղական բնակավայրերի 639 տնային տնտեսությունների շրջանում անցկացված հարցում-

ների վրա, որոնք տեղեկատվություն են տվել արտերկրում հաստատված 1259 միգրանտների մասին: Հարցումներ են իրականացվել նաև 29 փորձագետների շրջանում: Համեմատական բովանդակային նյութեր ստանալու նպատակով 2023 թ. իրականացվել է նաև 13 խորացված հարցազրույց:

Mihran Galstyan, Doctor of Historical Sciences, Associate professor
Heads of the Ethnology Department of NAS RA
Email: akoenk@yahoo.com

TO STAY OR TO LEAVE TO? EXPLORING THE SOCIO-CULTURAL ISSUE OF POTENTIAL EMIGRATION FROM ARMENIA

Keywords: *Emigration, socio-cultural reasons, gender, age, education, satisfaction.*

The issue emigration from Armenia, in terms of its causes, security implications, economic aspects, and demographic consequences, stands as a thoroughly examined subject in academic literature. Both Armenian and Western scholars primarily examine this issue through the lens of economic factors encompassing "retaining," "push" and "pull" factors within sending and receiving countries.

This article delves into the discourse surrounding the socio-cultural factors that underlie emigration. By doing so, it aims to reevaluate and potentially reshape existing paradigms. Recognizing the importance of understanding socio-cultural and psychological triggers behind emigration for identification and prediction, this article draws upon cultural theories on migration from Western sociology. Within this context, we emphasize the concept of cumulative causality, which posits that each instance of migration increases the likelihood of attracting new migrants and cultivating migration traditions within communities. We also explore social network theories.

Drawing upon research findings, we analyze the viewpoints of survey participants concerning their satisfaction with legal, security, self-realization, educational, and social institutions within Armenia, as well as their aspirations for the future. These factors play a pivotal role in shaping the reasons for potential future emigration. To address the question, "Are you currently considering relocating abroad for residential purposes?" we categorize the responses of those interested in leaving Armenia based on gender, age, education, language proficiency, financial well-being, family status, social networks, preferred destination countries, intent to emigrate with family or alone, anticipated departure dates, and current place of residence (urban or rural). This analysis facilitates the identification of potential migrants and specific groups within Armenia's population harboring aspirations to emigrate.

The article is based on the data collected in 2021 through surveys conducted among 639 households in 20 urban and 37 rural settlements across all regions of Armenia, which provided information on 1,259 migrants settled abroad. Additionally, 29 experts were consulted. To provide updated context, in 2023, 13 in-depth interviews were conducted.

ОСТАТЬСЯ ИЛИ УЕХАТЬ? О СОЦИОКУЛЬТУРНОЙ ПРОБЛЕМЕ ВОЗМОЖНОЙ НОВОЙ ЭМИГРАЦИИ ИЗ АРМЕНИИ

Ключевые слова: эмиграция, социокультурные причины, пол, возраст, образование, удовлетворенность.

Проблема эмиграции из Армении, ее причин, экономического, демографического воздействия и безопасности - одна из достаточно изученных тем в научной литературе. И армянские, и зарубежные ученые исследуют эту проблему в основном в рамках теории “удержания”, “отталкивания” и “притяжения” экономических факторов, существующих в отправляющих и принимающих странах. В данной статье основной акцент посвящен социокультурной проблеме, вызывающей эмиграцию. Работа даст возможность пересмотреть и изменить существующие ранее подходы, поскольку для выявления и дальнейшего прогнозирования новой миграции важное место в ней отведено анализу социокультурных и психологических факторов, вызывающих это явление, при этом с учетом культурных теорий западной социологии о происхождении миграции.

Особую важность приобретает проблема кумулятивной причинно-следственной связи, поскольку каждый случай миграции увеличивает вероятность привлечения новых мигрантов и формирования традиций миграции в общине и социальных сетях.

В рамках этих подходов на основе результатов исследования среди причин новой возможной миграции проанализированы позиции участников опроса относительно удовлетворенности правовыми, образовательными, социальными институтами, институтами безопасности и самореализации, созданными в Армении, и отношение к будущему.

На вопрос “Собираетесь ли вы в настоящее время выехать за границу на жительство?” ответы желающих покинуть Армению сгруппированы по полу, возрасту, образованию, семейному положению, уровню владения языком, материальной удовлетворенности, социальным сетям, желанию покинуть страну с семьей или в одиночку, по предпочитаемым странам, предполагаемым датам отъезда, типу проживания (город, село). Этот анализ дает возможность выявить потенциальных мигрантов и потенциальные группы желающих покинуть Армению.

Статья основана на этносоциологических опросах, проведенных среди 639 домохозяйств в 20 городских и 37 сельских населенных пунктах всех регионов Армении в 2021 году, в результате которых были получены данные о 1259 мигрантах, обосновавшихся за рубежом, и материалах 29 экспертных опросов. Для получения сравнительных материалов в 2023 г. было проведено 13 углубленных интервью.

**«ՀԱԼԵՊԻ ՇՈՒԿԱՆ»՝ ՈՐՊԵՍ ՄԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻԿՐՈՍՈՂԵԼ**

Հիմնաբառեր՝ սիրիահայեր, ներգաղթ, ձեռնարկատիրական գործունեություն, «Հալեպի շուկա», որակական հետազոտություն:

2011 թ. Սիրիայում ընթացող պատերազմի հետևանքով սիրիահայերի մի մասը ներգաղթեց Հայաստան: Նրանք, որ ապրել էին այլ սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգում, տեղափոխվեցին բոլորովին նոր միջավայր, որին հարմարվելը դարձավ անհրաժեշտություն՝ Հայաստանում գործունեություն սկսելու և հետագա կյանքը շարունակելու համար: ՀՀ տեղափոխվելու առաջին տարիներին ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու խոչընդոտները բազմաթիվ էին՝ հարկային և մաքսային համակարգի չիմացություն, փոքր շուկայի առկայություն, ցածր եկամտաբերություն, ֆինանսական ռեսուրսների բացակայություն և այլն: Բացի այս պատճառներից, առկա էր նաև սուբյեկտիվ գործոնը. շատերը չէին ցանկանում ներդրումներ կատարել, քանզի Հայաստանը համարում էին ժամանակավոր ապաստան:

Սույն զեկուցմամբ անդրադառնալու ենք սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեությանը Երևանում՝ նրանց տեղափոխվելուց տասը տարի անց՝ որպես օրինակ դիտարկելով «Հալեպի շուկայում» ծավալվող գործունեությունը: «Հալեպի շուկան» ստեղծվել է 2014-2015 թթ., երբ Երևանի մետրոպոլիտենի Հանրապետության հրապարակ կայարանի անցումում տարածք հատկացվեց սիրիահայերին:

Հետազոտությունը կատարվել է որակական մեթոդաբանությամբ՝ կիրառելով փաստաթղթերի (Էլեկտրոնային մամուլի) վերլուծության, դիտարկման, խորին հարցազրույցի մեթոդները: Ելնելով մեր ուսումնասիրության արդյունքներից՝ կարող ենք ասել, որ «Հալեպի շուկան» համարվում է Երևանում սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդելը. 1) Այն ներառում է նրանց կողմից ծավալվող ձեռնարկատիրական գործունեության հիմնական ոլորտները: 2) Սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեությունը համարվում է նրանց ընտանիքների եկամտի հիմնական աղբյուրը: 3) Նրանց մեծամասնությունը տնտեսական գործունեություն ծավալելու համար չունի սեփական տարածք. աշխատում են վարձակալական հիմունքներով: 4) Շատ դեպքերում տնտեսական գործունեության մեջ ներգրավված են ընտանիքի մի քանի անդամներ, այսինքն՝ ստեղծված են ընտանեկան բիզնեսներ: 5) Ժամանակի ընթացքում, ընդլայնելով և կայունացնելով հաճախորդների շրջանակը, ներգրավում են նաև տեղացի աշխատողներին: 6) Սիրիահայերը հաղթահարել են հարկային և մաքսային օրենսդրության չիմացության խնդիրներն ու հայաստանյան գործարար միջավայրին հարմարվելու խոչընդոտները: 7) Նրանց շրջանում գործում է սոցիալական ցանցի և փոխօգնության մեխանիզմը. այս շուկայում հավաքված մարդիկ դեռևս Սիրիայից ճանաչել են իրար: 8) Մեկ տեղում կենտրոնացված գործունեությունը նպաստում է նրանց խմբային ինքնության պահպանմանն ու վերարտադրմանը:

"ALEPPO MARKET" AS A MICRO-MODEL OF THE ENTREPRENEURIAL ACTIVITY OF SYRIAN-ARMENIANS

Keywords: Syrian Armenians, immigration, entrepreneurial activity, "Aleppo market", qualitative research.

In 2011, as a consequence of the civil war in Syria, a part of the Syrian Armenian population immigrated to Armenia. They used to live in a different system of socio-economic relations, and after moving to a completely new environment, they had to adapt in order to begin activities in Armenia and continue their lives. In the first years of moving to RA, there were many obstacles to doing business, including the ineptitude of the tax and customs system, the existence of a small market, low profitability, and a lack of financial resources, among others. In addition to these factors, there was also a subjective factor: many did not want to invest because they considered Armenia a temporary refuge.

With this report, we will address the business activities of Syrian Armenians in Yerevan, ten years after they moved, considering the activities unfolding in the "Aleppo market" as an example. "Aleppo Market" was created in 2014–2015, when a space was allocated to Syrian Armenians in the underpass of the Republic Square station by the Yerevan Metropolitan.

The research was carried out with qualitative methodology, applying the methods of document (electronic press) analysis, observation, and in-depth interviews. Based on the results of our study, it can be said that the "Aleppo market" is considered the micro-model of the entrepreneurial activity of Syrian Armenians in Yerevan. 1) It includes the main areas of their business activities. 2) The entrepreneurial activity of Syrian Armenians is considered the main source of income for their families. 3) Most of them do not have their own territory to carry out economic activities; they work on a rental basis. 4) In most cases, several family members are involved in the economic activity; hence, family businesses are created. 5) Over time, they expand and stabilize the circle of customers; they also involve local workers in the business. 6) Syrian Armenians have overcome the problems of not knowing the tax and customs legislation and the obstacles of adapting to the Armenian business environment. 7) The social network and mutual aid mechanisms work among them. The people gathered in this market know each other from Syria. 8) Activities concentrated in one place contribute to the preservation and reproduction of their group identity.

“РЫНОК АЛЕППО” КАК МИКРОМОДЕЛЬ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ СИРИЙСКИХ АРМЯН

Ключевые слова: сирийские армяне, иммиграция, предпринимательская деятельность, «рынок Алеппо», качественное исследование.

В результате войны в Сирии в 2011 году часть сирийских армян иммигрировала в Армению. Раньше они жили в другой системе социально-экономических отношений, и после переезда в совершенно новую среду адаптация стала для них необходимостью, чтобы начать деятельность в Армении и продолжить свою дальнейшую жизнь. В первые годы переезда в РА существовало множество препятствий для ведения бизнеса: некомпетентность налоговой и таможенной системы, наличие небольшого рынка, низкая рентабельность, отсутствие финансовых ресурсов и т.д. Помимо этих причин, был еще субъективный фактор: многие не хотели инвестировать, поскольку считали Армению временным убежищем.

В докладе мы представим бизнес-деятельность сирийских армян в Ереване спустя десять лет после их переезда, рассматривая в качестве примера деятельность, развернувшуюся на «рынке Алеппо». «Рынок Алеппо» был создан в 2014-2015 годах, когда сирийским армянам было выделено место в подземном переходе станции «Площадь Республики» ереванского метрополитена.

Исследование проводилось по качественной методологии с применением методов анализа документов (электронной печати), наблюдения и глубинных интервью. По результатам нашего исследования можно сказать, что «рынок Алеппо» считается микромоделью предпринимательской деятельности сирийских армян в Ереване: 1) Он включает в себя основные направления их предпринимательской деятельности. 2) Предпринимательская деятельность сирийских армян считается основным источником дохода их семей. 3) Большинство из них не имеют собственной территории для ведения экономической деятельности; работают на арендной основе. 4) В большинстве случаев в экономической деятельности участвуют несколько членов семьи, следовательно, создаются семейные предприятия. 5) Со временем, расширяя и стабилизируя круг клиентов, привлекают к делу и местных работников. 6) Сирийские армяне преодолели проблемы незнания налогового и таможенного законодательства и трудности адаптации к армянской бизнес-среде. 7) Между ними работает социальная сеть и механизм взаимопомощи; люди, собравшиеся на этом рынке, знают друг друга по Сирии. 8) Деятельность, сосредоточенная в одном месте, способствует сохранению и воспроизводству своей групповой идентичности.

**ԱՐՏԱԳԱՂԹԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՍԵՐՆԴԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏՐԱՎՄԱ
(ՈՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Հիմնարարներ՝ Հայոց ցեղասպանություն, միջսերնդային տրավմա, արտագաղթ, պատերազմ, վախ, սփյուռք:

Հայոց Ցեղասպանության տրավմայի միջսերնդային դրսևորումները բազմաթիվ են և դարձել են ուսումնասիրությունների առարկա: Սույն զեկուցմամբ փորձ է արվել ուսումնասիրել միջսերնդային տրավմայի և արտագաղթի կապը: Խորհրդային Միության փլուզումը և Արցախյան առաջին պատերազմից հետո ստեղծված ճգնաժամային վիճակը նպաստեցին արտագաղթի ծավալների մեծացմանը: Վերջին ցավալի դեպքերն առավել ևս խորացրին միջսերնդային տրավման. եթե Քառօրյա պատերազմի ժամանակ կար որոշակի համոզմունք, որ մենք հաղթահարել ենք մեր միջսերնդային տրավման, ապա 44-օրյա պատերազմը, Արցախի շրջափակումը և հատկապես Արցախի բռնի հայաթափումը բարձրացրին ներքին խնդիրը, այն է՝ վախը՝ կապված հատկապես 1915 թվականի հետ: Անգամ սոցիալական մեդիա հարթակում տարածվեցին համեմատական լուսանկարներ: Այս ամենն արտահայտում է մեր միջսերնդային տրավմայի խորությունը և դրսևորման ձևերը, իսկ վերջինս խոսում է արդեն ի հայտ եկած գոհականացման մասին:

Չնայած սփյուռքագիտության մեջ ընդունված է, որ պարտադրված տրավմատիկ արտագաղթը նպաստում է կոլեկտիվ հիշողության մեջ վերադարձի գաղափարի պահպանմանը, սակայն ըստ մեր ուսումնասիրությունների՝ կոլեկտիվ հիշողության մեջ պահպանվում է նաև ցեղասպանության վախը, որը փախուստի ցանկություն է առաջացնում և նպաստում արտագաղթին: Շատ հաճախ այդ մտքերն արթնանում են ոչ միայն որևէ բարդ ժամանակաշրջանում, այլև նաև խաղաղ պայմաններում: Որքան հոգեբանական տրավմաները խորքային են լինում, այնքան անձը խուսափում է տրավմայի հետևանքով տազնապ առաջացնող երևույթներից, քանի որ յուրաքանչյուր դեպք թրիզեր է հանդիսանում տրավմայի գլուխ բարձրացնելուն: Նոր պատերազմի վախը և բռնագաղթը նպաստելու է հնարավոր նոր արտագաղթի ալիքի, որի հիմքում ընկած է մեր միջսերնդային տրավմայի արտահայտումը: Մենք գուցե մեր գիտակցական մակարդակում նշենք, որ ապահովում ենք մեր ընտանիքի և երեխաների անվտանգությունը, սակայն անգիտակցական մակարդակում ապրում է Ցեղասպանության տրավմայի վախը:

Դեռևս վերջին դեպքերից առաջ, աշխատելով մեր սփյուռքի հայրենակիցների հետ, հաճախ էինք հանդիպում այդ մտքին, որ նրանք վախենում են պատերազմից. ոմանք նշում էին սոցիալ-տնտեսական վիճակը, սակայն հոգեբանական աշխատանքից հետո պարզ էր դառնում, որ մեծ թիվ են կազմում այն մարդիկ, ովքեր վախենում են Հայաստանում ապրել:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ արտագաղթը հանդիսանում է միջսերնդային տրավմայի արտահայտման ձև: Անգամ Հայաստանում ապրող հայերի մոտ շատ հաճախ հանդիպում ենք այդ խնդիրը՝ գաղթելիս ինչ կարող եմ վերցնել ինձ հետ: Շատ հաճախ այդ ամենը վերածվում է գործողության (վատ օրվա համար պահուստ):

Mariam Hergnyan
Master of Psychology, Independent researcher
Email: shushanmariamhergnyan@mail.ru

EMIGRATION AS AN INTERGENERATIONAL PSYCHOLOGICAL TRAUMA (QUALITATIVE ANALYSIS)

***Keywords:** Armenian Genocide, intergenerational trauma, emigration, war, fear, diaspora.*

The intergenerational manifestations of the trauma of the Armenian Genocide are numerous and have become the subject of studies. In this article, an attempt was made to study the relationship between intergenerational trauma and emigration. The collapse of the Soviet Union and the crisis situation created after the first Artsakh war contributed to the increase in emigration. The recent painful events deepened our intergenerational trauma. If during the Four-day war there was a certain belief that we had overcome our intergenerational trauma, then the 44-day war, the blockade and especially the forced eviction of Armenians of Artsakh raised the internal problem, fear, especially the year 1915. Comparative photos were even shared on the social media platform. All this expresses the depth and forms of our intergenerational trauma, the latter speaks of the victimization that has already appeared.

Although it is accepted in diasporic studies that forced traumatic emigration contributes to the retention of the idea of return in the collective memory, but according to our studies, the fear of genocide is also preserved in the collective memory, which causes a desire to escape and contributes to emigration. Very often, these thoughts do not appear only in difficult times, but are also present in peaceful conditions. The deeper the psychological traumas are, the more the person avoids the anxiety-causing phenomena as a result of the trauma, because each event is a trigger for the trauma to rear its head. The fear of a new war and emigration will contribute to a possible new emigration wave, the basis of which is the expression of our intergenerational trauma. We may say on our conscious level that we ensure the safety of our family and children, but on an unconscious level we live the fear of the trauma of the Genocide.

Even before the recent events, while working with our compatriots in the diaspora, we often encountered the idea that they are afraid of war. Some mentioned the socio-economic situation, but after the psychological work it became clear that there are a large number of people who are afraid to live in Armenia.

Thus, we can say that emigration is a form of expression of intergenerational trauma. Even among Armenians living in Armenia, we often encounter this problem: what can I take with me when emigrating? Very often all that turns into action /reserve for a bad day/.

ЭМИГРАЦИЯ КАК МЕЖПОКОЛЕННАЯ ПСИХОЛОГИЧЕСКАЯ ТРАВМА (КАЧЕСТВЕННЫЙ АНАЛИЗ)

Ключевые слова: Геноцид армян, межпоколенная травма, эмиграция, война, страх, диаспора.

Межпоколенческие проявления травмы Геноцида армян многочисленны и стали предметом исследований. В данном докладе предпринята попытка изучить взаимосвязь межпоколенческой травмы и эмиграции. Распад Советского Союза и кризисная ситуация, сложившаяся после первой Арцахской войны, способствовали увеличению эмиграции. Недавние болезненные события усугубили нашу травму, передаваемую из поколения в поколение. Если во время четырехдневной войны была определенная вера в то, что мы преодолели нашу травму межпоколений, то 44-дневная война, блокада и особенно насильственное изгнание армян Арцаха подняли внутреннюю проблему, страх, особенно 1915 года. Сравнительные фотографии даже были опубликованы в социальной сети. Все это выражает глубину и формы нашей межпоколенческой травмы, что говорит об уже появившейся виктимизации.

Хотя в Диаспороведении принято, что вынужденная травматическая эмиграция способствует сохранению идеи возвращения в коллективной памяти, но, по нашим исследованиям, в коллективной памяти сохраняется и страх геноцида, что вызывает желание бегства и способствует эмиграции. Очень часто эти мысли появляются не только в трудные времена, но присутствуют и в мирных условиях. Чем глубже психологические травмы, тем больше человек избегает явлений, вызывающих тревогу в результате травмы, поскольку каждое событие является триггером для того, чтобы травма проявилась. Страх перед новой войной и эмиграцией будет способствовать возможной новой волне эмиграции, в основе которой лежит выражение нашей межпоколенческой травмы. На сознательном уровне мы можем говорить, что обеспечиваем безопасность нашей семьи и детей, но на бессознательном уровне мы живем страхом перед травмой Геноцида.

Еще до недавних событий, работая с нашими соотечественниками в диаспоре, мы часто сталкивались с мыслью, что они боятся войны. Некоторые упомянули социально-экономическую ситуацию, но после психологической работы выяснилось, что очень много людей боятся жить в Армении.

Таким образом, можно сказать, что эмиграция является формой выражения межпоколенческой травмы. Даже среди армян, проживающих в Армении, мы часто сталкиваемся с такой проблемой: что я могу взять с собой во время миграции? Очень часто все это превращается в действие (резерв на неудачный день).

Արտաշես Բոյաջյան, պ. գ. թ., դոցենտ
ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, ավագ գիտաշխատող
Էլ. հասցե՝ a.boyajyan@mail.ru

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ

Բանալի բառեր՝ ազգ, կրոն, կրոնական աղանդներ, էթնիկական խմբեր, արտագաղթ, գլոբալացում, արժեհամակարգ, էթնոկրոնական կազմ, սեռատարիքային կազմ, ազգային քաղաքականություն:

Սույն զեկուցման նպատակն է ներկայացնել Շիրակի մարզի 20-րդ դարի վերջի 19-րդ դարի սկզբի բնակչության էթնոկրոնական կազմի շարժընթացը, փոփոխության միտումները, դրանց վրա ազդող շարժառիթները և դրդապատճառները: Փորձ է կատարվել վեր հանել անձի էթնոկրոնական ինքնության և արժեհամակարգի հարաբերակցությունը: Հողվածում վերլուծվել և բացահայտվել են Շիրակի բնակչության էթնոժողովրդագրական առանձնահատկությունները:

Գլոբալացման պայմաններում անձի էթնոմետ արժեհամակարգի ինքնագիտակցության և կրոնական ինքնության հիմնախնդիրների ուսումնասիրությունն ունի արդիական նշանակություն, հատկապես այն դեպքում, երբ աշխարհում սփռված հայերի ընդհանուր թվի մոտ 15%-ն է բնակվում Հայաստանի Հանրապետությունում:

Շիրակի մարզի բնակչության էթնոկրոնական կազմի փոփոխությունների ընթացքը պարզելու նպատակով կարևոր ենք համարում անդրադառնալ էթնոժողովրդագրական հետևյալ խնդիրներին.

- ազգաբնակչության թվի փոփոխությանը և դրանում արտագաղթի գործոնի ազդեցությանը,
- ազգաբնակչության սեռատարիքային կազմի փոփոխության առանձնահատկություններին,
- էթնոկրոնական կազմի փոփոխությանը և կրոնական աղանդների գործունեության ընթացքին:

Մարզի բնակչության էթնոկրոնական կազմն ուսումնասիրելու համար հիմք ենք ընդունել Հայկական ԽՍՀ 1989 թ., ՀՀ 2001 թ. և 2011 թ. մարդահամարի տվյալները, վերլուծել ենք Շիրակի մարզում բնակվող ազգությունների սեռատարիքային կազմի, կրթական մակարդակի, միգրացիայի ծավալի փոփոխությունները՝ շեշտելով դրանց ազդեցությունը բնակչության թվի փոփոխության և բնական վերարտադրության վրա: Հատկապես ուշադրություն ենք դարձրել 2022 թ. ռուս ուկրաինական պատերազմով պայմանավորված Շիրակի մարզ ներգաղթած ռուսաստանցիների թվաքանակի, սեռատարիքային ու մասնագիտական կազմի վրա:

Artashes Boyajyan, Ph.D., Associate professor
Shirak Center for Armenological Studies of NAS RA, Senior researcher
Email: a.boyajyan@mail.ru

TRENDS OF THE ETHNO-RELIGION COMPOSITION OF THE POPULATION OF THE SHIRAK REGION

***Keywords:** nation, religion, religious sect, emigration, globalization, system of values, ethno-religious composition, gender and age composition, national policy.*

The purpose of this article is to present changes in the ethno-religious composition of the population of the Shirak region and the motives influencing them. We tried to highlight the change in a person's ethno-religious identity and value system. The article analyzes and identifies the ethnodemographic characteristics of the population of Shirak. In order to study the ethno-religious composition of the population of the region, we took the Armenian SSR of 1989 as a basis, RA 2001 and 2011 census data, ethnographic field materials, and scientific publications on the topic. Let us recall that the ethno-religious composition of the population of the Shirak region has been practically not studied, while in the Republic of Armenia it has been studied quite well.

The trend of the ethno-religious composition of the population of the newly independent RA marzes has hardly been studied from an ethno-geographic point of view. In that regard, we are trying to present the number of nationalities living in the region from an ethnogeographic point of view, what changes have been made, and what factors are responsible for these changes. We have also tried to highlight the changes in the religious structure of the population, paying special attention to some issues of religious conversion and statistical data.

Арташес Бояджян, к. ист. н, доцент
Ширакский центр арменоведческих исследований НАН РА,
старший научный сотрудник
Эл. почта: a.boyajyan@mail.ru

ТЕНДЕНЦИИ ЭТНОРЕЛИГИОЗНОГО СОСТАВА НАСЕЛЕНИЯ ШИРАКСКОЙ ОБЛАСТИ

***Ключевые слова:** нация, религия, религиозная секта, эмиграция, глобализация, система ценностей, этнорелигиозный состав, половозрастной состав, национальная политика.*

Цель данного доклада – представить динамику этнорелигиозного состава населения Ширакской области с конца 20 века до начала 21 века, тенденции изменения, причины и мотивы, влияющие на них. Сделана попытка показать взаимосвязь этно-религиозной идентичности человека и системы ценностей. В докладе проанализированы и выявлены этнодемографические характеристики населения Ширака.

В условиях глобализации изучение вопросов самосознания и религиозной идентичности этноцентрической системы ценностей человека очень важно, особенно когда

в Республике Армения проживает около 15% от общего числа армян, разбросанных по всему миру.

Для выяснения процесса изменения этнорелигиозного состава населения Ширакского марза, мы считаем важным представить следующие этнодемографические вопросы:

- изменение численности населения страны и влияние на нее фактора эмиграции.
- особенности изменения половозрастного состава населения страны.
- изменение этнорелигиозного состава и направления деятельности религиозных сект.

С целью изучения этнорелигиозного состава населения региона мы обратились к данным переписи населения Армянской ССР 1989 г., РА 2001 и 2011 годов, проанализировали изменения в половозрастном составе, образовательном уровне и объеме миграции национальностей, проживающих в Ширакской области, подчеркнув их влияние на изменение численности населения и естественное воспроизводство. Особое внимание мы уделили количеству, полу, возрасту и профессиональному составу россиян, иммигрировавших в Ширакскую область в связи с российско-украинской войной 2022 года.

Կարինե Սահակյան, հ. գ. թ., դոցենտ
ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, ավագ գիտաշխատող
Շիրակի պետական համալսարան, հոգեբանության ամբիոնի վարիչ
Էլ. հասցե՝ sahakyanani@mail.ru

Ռոզա Հովհաննիսյան
ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, գիտաշխատող
Էլ. հասցե՝ vard-rosa@mail.ru

**«ԴԱՏԱՐԿՎԱԾ ԲՆԻ» ՀԱՄԱԽՏԱՆԻՇ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ
(Էթնոհոգեբանական ուսումնասիրություն)**

Հիմնաբառեր՝ դատարկված բույն, համախտանիշ, ընտանիք, հիմնախնդիրներ, ներընտանեկան դերեր, բախում, հարմարում:

Զեկուցման առանցքում «դատարկված բնի համախտանիշ» ունեցող ընտանիքների սոցիալ-հոգեբանական վիճակի քննությունն է, որը, անշուշտ, սրվել է 21-րդ դարի նորանոր մարտահրավերների (Արցախյան պատերազմներ, համավարակ և այլն) համապատկերում:

Մեր ուսումնասիրության նպատակն է ընտանիքը գորացնող միջոցների ու նոր ռազմավարությունների առաջադրումը, որով ընտանիքը կարող է հաղթահարել միջդերային բախումներն ու հասնել ներընտանեկան հարմարման:

Թեմայի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներընտանեկան հարաբերությունները ենթակա են շարունակական փոփոխությունների, և հարկավոր է բացահայտել ընտանեկան կյանքի դինամիկան՝ նրա կառուցվածքի ու գործառույթների շարժը ժամանակի ընթացքում:

Մեր թիրախային խմբում են գերազանցապես Շիրակի մարզի այն ընտանիքները, որոնց կառուցվածքը փոխվել է զավակների, հատկապես վերջին զավակի՝ տունը լքելուց հետո: Ավանդական ընտանիքի համար այս անցումը երբեմն ուղեկցվում է ծնողների ներաշխարհային տագնապներով ու սուր զգացումներով. երբեմնի ընտանիք-բերդը դարձել է դատարկված բույն: Մասնագիտական գրականության մեջ «դատարկված բնի» համախոտանիշը սահմանվում է որպես *տարեց ամուսինների ընտանեկան վիճակ, երբ զավակներն արդեն հասունացել և հեռացել են իրենց ծնողների ընտանիքից, և նրանք մնացել են երկուսով:*

Մեր ուսումնասիրության ծիրում են մասնավորապես՝

- գոհ(եր) ունեցող ընտանիքը (պատերազմի հետևանքով գոհվել են զավակները),
- միայնակ մնացած տարեց ծնող(ներ)ով ընտանիքը,
- ընտանիք, որ մի մասն արտագաղթել է (սոցիալ-տնտեսական վատթար վիճակի պատճառով զավակներն արտագաղթել են ծնողներին թողնելով միայնակ): «Դատարկված բնի» համախոտանիշ ունեցող ընտանիքներում հիմնական հայտանիշներն են առավելապես սրված է կորստի զգացումը (հատկապես կյանքի իմաստի կորուստ), ակներև են ծնողների միջանձնային հարաբերությունների աղքատացումն ու զգացմունքային սթրեսը, քանի որ նրանք կորցրել են իրենց սոցիալական դերն ու վերահսկողության լոկուսը: Ըստ էության, միայնակ մնացած հատկապես տարեց ծնողներն ապրում են խորը հիասթափություն զավակների հանդեպ վերահսկողության բացակայությունից, դժվարացել է նրանց սոցիալական ադապտացիան, նրանք որոնում են փոխհատուցման նոր եղանակներ, որը, սակայն, իրականության մեջ դժվար վերարտադրելի է: «Դատարկված բնի» համախոտանիշի դեպքում փոխվում են ընտանիքի արժեքային կողմնորոշումները, դիրքորոշումները, զգայության շեմը, ստեղծվում են հաղորդակցման դժվարություններ տարեց ծնողների և զավակների միջև:

Մեր ուսումնասիրության նպատակից բխող խնդիրներն են՝ ընտանիքը վերագորացնող միջոցների առաջադրում, այն է՝ հոգեբանական միջդերային հարմարվածություն, հոգեշտկում, միջսերնդային վերահաս բախումների հոգեբանական կանխարգելում, ինքնապաշտպանական մեխանիզմների ամրակայում, ընտանիքի հասունացման մակարդակի բարձրացում, ապրումակցման ապահովում, ներընտանեկան դերային փոխներգործության բարձր արդյունավետություն, սոցիումի մեջ դիրքորոշման առկայություն, ի վերջո, էթնիկական մոդելների ու էթնիկական ստերեոտիպերի վերահաստատում ներընտանեկան կառուցվածքում:

Ընտանիքի՝ որպես հասարակության մանրակերտի ներքին վիճակով է զգալիորեն պայմանավորված հասարակության դիմագիծը, նրա կենսունակությունը: Հետևաբար՝ հայրենիքը, որպես «դատարկված բնի» համախոտանիշ ունեցող մեծ տուն, այսօր խոշոր հաշվով ևս կարիք ունի ճգնաժամերի հաղթահարման ու հզորացման:

Sahakyan Karine, Ph.D., Associate professor
Shirak Center for Armenological Studies of NAS RA, Senior researcher
Shirak State University, Head of the psychology department, sahakyanani@mail.ru

Roza Hovhannisyan,
Shirak Center for Armenological Studies of the NAS RA, researcher
vard-rosa@mail.ru

FAMILIES EXPERIENCING THE 'EMPTY NEST' SYNDROME (AN ETHNOPSYCHOLOGICAL STUDY)

Keywords: *Empty nest, syndrome, family, challenges, intra-family roles, conflicts, adaptation.*

The report delves into the socio-psychological state of families experiencing 'Empty Nest Syndrome,' a condition notably amplified by the unique challenges of the 21st century, such as the Artsakh wars and the pandemic. Our study aims to offer strategies for strengthening families, enabling them to navigate inter-role conflicts and attain intra-family harmony. This study's significance lies in the ever-evolving nature of intra-family dynamics.

Our research particularly focuses on families in Shirak region who have suffered losses (such as children who died as a result of the war); families with elderly parents now living alone, as well as partially migrated families, where children have emigrated due to the poor socio-economic situation, leaving their parents behind.

Families with the 'empty nest' syndrome experience a sense of loss, particularly regarding the meaning of life. This situation often leads to a noticeable decline in interpersonal relationships and heightened emotional stress among parents. Their social roles and locus of control are diminished. They grapple with deep disappointment over their dwindling influence on their children, making social adaptation increasingly challenging. Furthermore, the 'empty nest' syndrome can trigger shifts in the family's value systems, perspectives, and emotional thresholds. The challenges stemming from the objective of our study revolve around implementing strategies to fortify families. These strategies include fostering psychological inter-role adaptation, facilitating emotional healing, enhancing self-defense mechanisms, elevating the level of family maturity, fostering harmonious coexistence, reinforcing individuals' social standing, and revitalizing ethnic models and stereotypes within the family structure. The vitality and image of a society are significantly shaped by the internal dynamics of its families, which serve as microcosms of the larger social order. Therefore, just as a nation collectively faces the 'empty nest' syndrome, it is essential to address these crises and bolster familial foundations for a stronger society.

Карине Саакян, кандидат психологических наук, доцент
Ширакский центр Арменоведческих Исследований НАН РА,
Ширакский Государственный Университет, заведующий
кафедрой психологии
Эл. почта: sahakyanani@mail.ru

Роза Оганнисян
Ширакский центр арменоведческих исследований НА РА
Эл. почта: vard-rosa@mail.ru

СЕМЬИ С СИНДРОМОМ «ПУСТОГО ГНЕЗДА» (этнопсихологическое исследование)

Ключевые слова: пустое гнездо, синдром, семья, проблемы, внутрисемейные роли, конфликт, адаптация.

В основе доклада изучение социально-психологического состояния семей с «синдромом пустого гнезда», которое, безусловно, усугубляется новыми вызовами 20-ого века (Арцахские войны, пандемия). Цель нашего исследования – предложить меры по укреплению семьи и новые стратегии, с помощью которых семья сможет преодолеть межролевые конфликты и добиться внутрисемейной адаптации. Актуальность исследования темы обусловлена тем, что внутрисемейные отношения подвержены непрерывным изменениям, и необходимо раскрыть динамику семейной жизни, которая представляет собой движение ее структуры и функций во времени. Нашей целевой группой являются в основном те семьи Ширакской области, структура которых изменилась после того, как дети, особенно последний ребенок, ушли из дома. Для традиционной семьи этот переход иногда сопровождается внутримировыми тревогами и острыми переживаниями родителей. Некогда семейная крепость превратилась в пустое гнездо. В профессиональной литературе синдром «пустого гнезда» определяется как семейная ситуация пожилых супругов, когда дети выросли и покинули семью родителей, и они остались одни. В нашем исследовании, в частности, выделяются:

- семьи пострадавших (дети погибли в результате войны),
- семьи, в которых пожилые родители остались одни,
 - частично мигрировавшая семья (в связи с плохим социально-экономическим положением, дети эмигрировали, оставив родителей одних).

В семьях с синдромом «пустого гнезда» основными симптомами являются: особенно остро ощущается чувство утраты (особенно потеря смысла жизни), очевидно обеднение межличностных отношений и эмоциональное напряжение родителей, поскольку они утратили свою социальную роль и фокус контроля. Собственно говоря, особенно пожилые родители, оставшиеся одни, глубоко разочарованы отсутствием контроля над своими детьми, их социальная адаптация затруднилась. При синдроме «пустого гнезда» между пожилыми родителями и детьми меняются ценностные ориентации, позиции, порог чувств, возникают трудности в общении. Проблемами, вытекающими из цели нашего исследования, являются внедрение средств укрепления семьи, а именно: психологическая межролевая адаптация, исцеление души, психологическая профилактика межпоколенческих напряжений и конфликтов, усиление механизмов самозащиты, повышение уровня семьи, зрелость, обеспечение сосуществования, наличие позиции в обществе, наконец, этническое подтверждение моделей и

этнических стереотипов во внутрисемейной структуре. Лицо общества, его жизнеспособность в значительной степени определяются внутренним состоянием семьи, как модели общества. Поэтому Родине, как большому дому с синдромом «пустого гнезда», необходимо сегодня преодолевать кризисы и укрепляться.

Սոնա Ներսիսյան, պ. գ. թ.
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, ավագ գիտաշխատող
Էլ. հասցե՝ sona.nersisyan2006@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՑԻ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր՝ ներգաղթյալների ընկալումներ, ռուսաստանցի ներգաղթյալներ, հարմարում, համարկում (ինտեգրացիա), ռազմական մոբիլիզացիա:

Միայն 2022 և 2023 թվականներին Ռուսաստանից ավելի շատ ներգաղթյալ է տեղափոխվել ՀՀ, քան նախորդ տասը տարիներին միասին վերցրած: Տեղափոխվածների ազգային կազմը հիմնականում ներառել է ռուսներին, ուկրաինացիներին, բելառուսներին, հայերին և այլն, որոնք Հայաստան են եկել տարբեր նպատակներով՝ շատ դեպքերում տեղափոխելով իրենց ֆինանսական միջոցները, ունեցած կապիտալը:

Ունենալով ընդհանուր պատմական անցյալ՝ Ռուսաստանից տեղափոխված այլազգի ներգաղթյալները որոշակի ապահովություն են տեսնում հայաստանյան հասարակական միջավայրում: Նրանց ճնշող մեծամասնությունը քրիստոնեություն է դավանում, իսկ լեզուն հասկանալի է տեղացիների հետ շփման համար: Հարմարման և համարկման տեսանկյունից այս խումբն ունի որոշակի առավելություններ: Այնուհանդերձ, Ռուսաստանից տեղափոխված ներգաղթյալների մեջ առանձնանում են տարբեր խմբեր, որոնցից յուրաքանչյուրն ուսումնասիրվել է առանձին փուլով:

Այսպես, մեր կողմից հետազոտություն է իրականացվել «Այլազգի ներգաղթյալների սոցիալական ինտեգրման փորձառությունը Հայաստանում. իրավիճակ և զարգացումներ - 22YR-6A037» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ-ում ռուսաստանցի ներգաղթյալների, մասնավորապես ՌԴ-ում ռազմական մոբիլիզացիայի պատճառով ՀՀ տեղափոխված ներգաղթյալների խմբի հետ:

Տեղափոխության արդյունքում մի շարք հարցեր են ծագում թե՛ ներգաղթյալների և թե՛ ընդունող հասարակության շրջանում, սակայն այս զեկուցման շրջանակում կկենտրոնանանք ընդունող երկրի հասարակության վերաբերյալ ներգաղթյալների ընկալումների վրա:

Հետազոտության արդյունքներն ուշագրավ են մի քանի կողմերով. նախ, որ Հայաստանի վերաբերյալ հարցվողները կա՛մ պատկերացում չեն ունեցել, կա՛մ ունեցել են աղճատված պատկերացում՝ միջնորդավորված տեղեկատվության միջոցով, և նրանց իրական ընկալումները սահմանափակվում են մի քանի միջերի շուրջ: Վերջինները մանրամասնորեն կներկայացվեն զեկուցման մեջ:

Այս զեկուցման մեջ օգտագործվել են հետազոտության արդյունքները, որոնք ձեռք են բերվել ներկայացուցչական ընտրանքով՝ 2022 մարտից մինչև 2023 հուլիս ընկած ժամանակահատվածում ՀՀ տեղափոխված ռուսաստանցի քսան ներգաղթյալների հետ կիսաձևայնացված հարցազրույցների միջոցով:

Sona Nersisyan, Ph.D.
IAE NAS RA, Senior researcher
Email: sona.nersisyan2006@gmail.com

ARMENIA IN THE PERCEPTIONS OF RUSSIAN IMMIGRANTS

***Keywords:** perceptions of immigrants, Russian immigrants, adjustment, enumeration, military mobilization.*

Only in 2022 and 2023, more immigrants moved to Armenia from Russia than in the previous 10 years taken together. The national composition of those who moved mainly included Russians, Ukrainians, Belarusians, Armenians, etc., who came to Armenia for various purposes, in many cases transferring their financial resources and capital.

